ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 11.02.2013թ.

Ո Ր Ո Շ Ու Մ

ԳԲԽ-09/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-09/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի կողմից 21.01.2013թ. ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-09/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. **<u>«Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Մեջիք Սթիք» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) հայտնել է, որ վերջինս 10.01.2013թ. մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետև՝ նաև Ընթացակարգ): Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.01.2013թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 1 արձանագրության 1.3 կետով որոշում է ընդունել մերժել «Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի հայտը՝ գնային առաջարկը սխալ լրացված լինելու հիմքով՝ առանց նշելու, թե որն է հանդիսանում տեղ գտած սխալը:

«Մեջիք Սթիք» ՍՊԸ-ն մասնակցել է Ընթացակարգի 1-ին չափաբաժնին, որով գնման առարկա է հանդիսացել 55.890կգ «Կարագ անհատական փաթեթավորմամբ» ապրանքը: Ընկերության կողմից գնային առաջարկը լրացվել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հրավերով (ծանուցմամբ) ներկայացված ձևին համապատասխան և եղել է տվյալ չափաբաժնի համար առաջարկված ամենանվազագույն գնային առաջարկը՝ 1 կգ-ի համար 2200 ՀՀ դրամ:

Գնահատող հանձնաժողովը 10.01.2013թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 1 արձանագրության 4.1 կետով որոշում է կայացրել Ընթացակարգի ընտրված (հաղթող մասնակից) ճանաչել «Էլայզեռ» ՍՊԸ-ին, մինչդեռ վերջինիս կողմից Ընթացակարգի 1-ին չափաբաժնով նախատեսված գնման ենթակա 1 կգ ապրանքի դիմաց առաջարկվել է 2400 ՀՀ դրամ, այսինքն 200 ՀՀ դրամով ավելի թանկ, քան «Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը: Փաստորեն «Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի ներկայացրած գինը 11.178.000 (տասնմեկ միլիոն հարյուր յոթանասունութ հազար) ՀՀ դրամով էժան է «Էլայզեռ» ՍՊԸ-ի առաջարկած գնից:

Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները հետևյալ հիմնավորումներով.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի (այսուհետ՝ նաև Օրենք) 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 111-րդ կետի 8-րդ մասի համաձայն՝ ընթացակարգի հաղթողը՝ ընտրված մասնակիցը, որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:

«Մեջիք Սթիք» ՍՊԸ-ն գտնում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված պահանջները, քանի որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը համապատասխանել է հրավերով սահմանված պահանջներին, ինչպես նաև վերջինիս կողմից գնման ենթակա ապրանքի 1-ին չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկը եղել է նվազագույնը:

Ընկերությունը խնդրել է դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.01.2013թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 1 արձանագրության 1.3 կետով ընդունած որոշումը «Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասով և նույն արձանագրության 4.1 կետով ընդունած որոշումը՝ «Էլայզեռ» ՍՊԸ-ին Ընթացակարգի ընտրված (հաղթող) մասնակից ճանաչելու մասով:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 23.01.2013թ. N04/032-126 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 21.01.2013թ. «Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 07.02.2013թ. N ԴՎԱ/340 գրությամբ «Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Մեջիք Սթիք» ՍՊԸ-ն մասնակցել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2–ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի 1-ին չափաբաժնին, որով գնման առարկա է հանդիսացել «Կարագ անհատական փաթեթավորմամբ» ապրանքը: 2013թ. հունվարի 10-ի ժամը 11:00-ին կայացած նիստում ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է «Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի հայտը, քանի որ ներկայացրած գնային առաջարկը սխալ էր լրացված՝ մասնավորապես ավելացված արժեքի հարկը սխալ էր հաշվարկված: 1833 ՀՀ դրամի 20 տոկոսը կազմում է 366,6 ՀՀ դրամ և ոչ թե 367 ՀՀ դրամ, ինչպես նշված էր «Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկում: ՀՀ պաշտպանության նախարարությունը նշել է, որ «Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկն ավելի էժան էր, քան մյուս մասնակիցներինը, սակայն գնահատող հանձնաժողովը չէր կարող հրավերի պահանջներին համապատասխան նշված կազմակերպության հայտը գնահատել բավարար: Ավելին, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2–ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգին մասնակցել է նաև երրորդ կազմակերպությունը («Էդ Ընդ Ջակ» ՍՊԸ), որի գնային առաջարկը նույնպես էժան էր ընտրված մասնակցից, սակայն նրա հայտը ևս գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել էր հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով: Այո, ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն

որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 111-րդ կետի 8-րդ մասի համաձայն՝ ընթացակարգի հաղթողը՝ ընտրված մասնակիցը, որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, մինչդեռ «Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից բավարար չի գնահատվել: «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է ՀՀ գնումների օրենսդրությանը համապատասխան և պատվիրատուն գտնում է, որ «Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքն անհիմն է:

3. ԳԲԽ-09/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի կողմից 21.01.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել՝ դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.01.2013թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 1 արձանագրության 1.3 կետով՝ «Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասով և նույն արձանագրության 4.1 կետով՝ «Էլայզեռ» ՍՊԸ-ին «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/16» ծածկագրով ընթացակարգի ընտրված (հաղթող) մասնակից հայտարարելու մասով ընդունված որոշումները:

4. ԳԲԽ-09/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-09/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի (այսուհետև՝ նաև Ընկերություն) կողմից 21.01.2013թ. ներկայացված բողոքը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/16» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.01.2013թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 1 արձանագրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետև՝ նաև Պատվիրատու) «Գնումների աջակցման կենտրոն»

ՊՈԱԿ-ին հասցեագրված 07.02.2013թ. N ԴՎԱ/340 գրությունը և դրան կից փաստաթղթերը և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ նաև Կենտրոն) եզրակացությունը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սննդամթերք ձեռք բերելու նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Էլայզեռ», «Մեջիք Սթիք» և «Էդ Ընդ Ջակ» ՍՊԸ-ները:

Գնահատող հանձնաժողովը 10.01.2013թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 1 արձանագրության 1.3 կետով որոշում է կայացրել մերժել «Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի հայտը՝ գնային առաջարկը սխալ լրացված լինելու հիմնավորմամբ:

Պատվիրատուն Կենտրոնին ուղղված գրությամբ նշել է, որ բողոքաբեր կազմակերպության հայտը մերժվել է, քանի որ ներկայացրած գնային առաջարկը սխալ էր լրացված՝ մասնավորապես ավելացված արժեքի հարկը սխալ էր հաշվարկված: 1833 ՀՀ դրամի 20 տոկոսը կազմում է 366,6 ՀՀ դրամ և ոչ թե 367 ՀՀ դրամ, ինչպես նշված էր «Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկում:

«Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացրած գնային առաջարկը կազմել է 2200 դրամ, ընդ որում ինքնարժեքը՝ 1746, շահույթը՝ 87, գինն առանց ԱԱՀ՝ 1833, ԱԱՀ-ն 367 դրամ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն հարկային պարտավորությունները և դրանց մարումները (վճարումը, հաշվանցումը), ինչպես նաև հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարները հաշվառվում են դրամով (առանց լումաների): Հարկային մարմին ներկայացվող հաշվարկներում, հայտարարագրերում, հաշվետվություններում, տեղեկություններում և այլ փաստաթղթերում, ինչպես նաև հարկային մարմնի կողմից տրվող ծանուցագրերում, տեղեկանքներում և այլ փաստաթղթերում հարկային պարտավորությունների և հաշվանցվող գումարների հաշվառման համար որպես չափման միավոր ընդունվում է դրամը (առանց լումաների):

Այսինքն, թեև 1833 դրամի (գնի առաջարկի ինքնարժեքի և շահույթի հանրագումար) ԱԱՀ-ի գումարը՝ 20 տոկոսը, կազմում է 366,6 դրամ, սակայն «Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին ներկայացրած գնային առաջարկում ԱԱՀ-ի գումարը լրացվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16.1 հոդվածի պահանջներին համապատասխան և այս մասով բողոքը հիմնավոր է:

«Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացրած գնային առաջարկը գնման առարկայի մեկ միավորի համար կազմել է 2200 դրամ, իսկ առանց ԱԱՀ-ի՝ 1833 դրամ:

«Էլայզեռ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացրած գնային առաջարկը գնման առարկայի մեկ միավորի համար կազմել է 2400 դրամ, իսկ առանց ԱԱՀ-ի՝ 2000 դրամ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 111-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ ընթացակարգի հաղթողը՝ ընտրված մասնակիցը, որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

Պատվիրատուի կողմից Ընթացակարգին մասնակցելու 24.12.2012թ. N 1758 ծանուցմամբ սահմանվել է, որ հաղթողի ընտրությունը կկատարվի նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Տվյալ դեպքում Ընթացակարգին ներկայացված առաջարկներից նվազագույն գնային առաջարկը «Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացրած առաջարկն է:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ «Էլայզեռ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու որոշումը դադարեցնելու մասով բողոքը նույնպես հիմնավոր է:

Այսպիսով Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ «Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի կողմից 21.01.2013թ. ներկայացված բողոքը բավարարել:

2. Դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.01.2013թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 1 արձանագրության 1.3 կետով՝ «Մեջիք Սթիք» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասով և նույն արձանագրության 4.1 կետով՝ «Էլայզեռ» ՍՊԸ-ին «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/16» ծածկագրով ընթացակարգի ընտրված (հաղթող) մասնակից հայտարարելու մասով ընդունված որոշումները:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գոռ Ենոքյան

Անդամ՝ Արայիկ Մնացականյան